



ԱՐԵՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ
NATIONAL SUPREME COUNCIL OF THE ARMENIANS OF WESTERN ARMENIA
НАЦИОНАЛЬНЫЙ ВЕРХОВНЫЙ СОВЕТ АРМЯН ЗАПАДНОЙ АРМЕНИИ
المجلس الوطني الأعلى لأرمن أرمينيا الغربية

ՆԱՄԱԿ

Յարգելի հայրենակիցներ,

Նախ թոյլ տուէք, մեր խորին շնորհակալութիւնը յայտնել, «Արեւմտահայութեան Ազգային Հայեցակարգ»-ի նախագիծին վերաբերեալ, այն բոլոր շինիչ եւ ազգային պատասխանատուութիւն արտայայտող ներդրումներուն համար:

Արձագանգները մեր ակնկալածէն շատ աւելի էին: Մեծամասնութեամբ խանդավառ եւ քաջալերիչ էին, մինչ ոմանք սուր քննադատութիւններ պարունակեցին, մանաւանդ փաստաթուղթի լեզուական կառուցուածքի մասին: Այս եզակի փորձառութիւնը, մեր ազգային աշխատանքներուն որակական զարգացում մը ընծայեցին, զայն փոխադրելով՝ սեղմ շրջանակներու կողմէ կատարուած նախաձեռնութիւններու մակարդակէն դէպի հաւաքական համագործակցութեան լուրջ հանգրուանի մը, որու վրայ հենելով, այսուհետեւ մենք յոյս կրնանք ունենալ մեր ապագային նկատմամբ:

Անոնք որոնք տակաւին առիթը չունեցան իրենց մասնակցութիւնը բերելու, դեռ մօտ մէկ շաբաթ ունին մինչեւ վերջնական ժամկէտը, 31 Մայիս 2021: Իսկ անոնք որոնք հնարաւորութիւնը չունին մանրամասն դիրքորոշում կատարելու, պարզապէս թող արտայայտեն իրենց. «համաձայն, դէմ կամ ձեռնպահ» ըլլալը: Իմանալով որ համագումարին պիտի հրաւերներ ստանան միայն հետաքրքրութիւն եւ յանձնառութիւն ցուցաբերողները: Մենք կրնանք ազգային միասնական աշխատանքի եւ համագործակցութեան առիթը միայն ստեղծել, իսկ մասնակից դառնալու գիտակցութիւնն ու պատրաստակամութիւնը կը մնայ իւրաքանչիւրի զուտ անձնական որոշումը:

Արեւմտահայութեան Ազգային Հայեցակարգի նախագիծը կատարելագործելու ներկայ գործընթացի բոլոր մանրամասնութիւնները, պիտի հաստատուին աւարտական եզրափակիչ տեղեկագիրով մը, որ պիտի փոխանցուի գալիք մեր սերունդներուն, եւ ապագային կատարուելիք ուսումնասիրութիւններուն տրամադրելու նպատակով: Սա ի վերջոյ, անկախ մեր իւրաքանչիւրի կամքէն, Արեւմտահայութեան արդի պատմութեան մաս պիտի կազմէ:

Յոյսով ենք որ, մինչեւ 31 Մայիս 2021 թուականը, կը ստանանք մնացած բոլոր մեր յարգարժան հարազատներու ներդրումները:

Յարգանօք,

ԱՐԵՄՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-ի
հիմնադիր մարմն

25 Մայիս 2021